




ԱՎՏՈՄԵԲԵՆԱՅԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐԿ

Վարկի տրամադրման նպատակը

Վարկը տրամադրվում է առաջնային կամ երկրորդային շուկաներից անհատական օգտագործման թեթև մարդաստար տրանսպորտային միջոց/ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով: Երկրորդային շուկայից ձեռք բերվող ավտոմեքենաների դեպքում վարկավորումը կարող է իրականացվել՝

- Ձեռք բերվող տրանսպորտային միջոցը, որի վաղեմությունը չպետք է գերազանցի 7 տարին, Ռուսական արտադրության ավտոմեքենաների դեպքում վարկավորումը իրականացվում է բացառապես առաջնային շուկայից ձեռք բերելու պայմանով,

- ոչ ռուսական արտադրության մինչև 7 տարվա վաղեմության ավտոմեքենա ձեռք բերելու համար:

Ովքեր կարող են դիմել

18- 65 տարեկան ԶՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, ովքեր վարկի սպասարկման ողջ ընթացքում չեն բոլորի 65 տարեկանը կամ առկա է վերոնշյալ պահանջներին բավարարող համավարկառու:

Ժամկետ	Հաստատուն տոկոսադրույք		36 - 60 ամիս
	Լողացող տոկոսադրույք		61 - 84 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք (Հաստատուն)	Առաջնային * շուկա	Եկամուտների հիմնավորմամբ	13%-15%
		Առանց եկամուտների հիմնավորման	16% -17%
	Երկրորդային շուկա	Եկամուտների հիմնավորմամբ	15%-16%
		Առանց եկամուտների հիմնավորման	17% -18%
Տարեկան անվանական տոկոսադրույք (Լողացող)	Առաջնային շուկա	սկսած 14%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 5%-ից + փոփոխուն բաղադրիչ)	
	Երկրորդային շուկա (կիրառելի է միայն մինչև 3 տարվա վաղեմություն ունեցող տրանսպորտային միջոցների ձեռք բերման դեպքում)	սկսած 15%-ից (հաստատուն բաղադրիչ՝ սկսած 6%-ից + փոփոխուն բաղադրիչ)	
	Լողացող տոկոսադրույքի տատանման առավելագույն և նվազագույն շեմ՝ +4%		
	Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը կսկսի վերանայվել վարկի կնքման պահից 36 ամիս ժամանակաշրջանին հաջորդող առաջին մարման ամսաթվից սկսած և յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ կիրառելով վերանայման պահին Բանկում գործող (կայքում փաստացի հրապարակված) տոկոսադրույքը: Լողացող տոկոսադրույքի հաշվարկման կարգ		

Վարկի գումարների և տոկոսագումարների մարման ժամկետների ուշացման դեպքում վճարվող տույժեր


Ժամկետանց վարկի համար	Օրական 0.015%
Ժամկետանց տոկոսագումարի համար	Օրական 0.1%

Վարկի վերադարձելիության ապահովման միջոց

- 1
- Ձեռք բերվող ավտոմեքենան
- 2
- Կարող է պահանջվել ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորությունների առկայություն

Գրավադրվող գույքի գնահատում	գրավադրման արժեքը հիմք է ընդունվում ավտոմեքենա իրացնող ընկերության կողմից Բանկի էլեկտրոնային համակարգում կամ Ներկայացված տեղեկանքում նշված արժեքը/առավաճառքի արժեքը: · Երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում գրավադրվող գույքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող գնահատող կազմակերպության կամ Բանկի համապատասխան աշխատակցի կողմից		
Վարկի տրամադրման եղանակը	Անկանխիկ		
Վարկի տրամադրման միանվագ կամ ամսական սպասարկման վճարներ	Չի սահմանվում		
Կանխավճար	Առաջնային շուկա	Եկամտի վերլուծությամբ	Առանց եկամուտների վերլուծության
		Նվազագույնը՝ 10%	Նվազագույնը՝ 30%
	Երկրորդային շուկա	Եկամտի վերլուծությամբ	Առանց եկամուտների վերլուծության
		· Մինչև 3 (ներառյալ) տարեկան մեքենա՝ Նվազագույնը 20% · 3- 7 (ներառյալ) տարեկան մեքենա՝ Նվազագույնը 30%	Նվազագույնը՝ 40%
Ապահովագրություն	Տրանսպորտային միջոցի ԿԱՍԿՈ ապահովագրություն - պարտադիր յուրաքանչյուր տարի վարկի ամբողջ ժամկետի ընթացքում, առնվազն վարկի մայր գումարի մնացորդի չափով: Առաջնային շուկայից ավտոմեքենայի ձեռքբերման դեպքում ԿԱՍԿՈ ապահովագրությունը կարող է կնքվել Բանկի հաշվին և վարկի մայր գումարի մնացորդի չափով համաձայն համագործակցող ընկերության կետ կնքված պայմանագրի դրույթների:		
Վարկի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշումների կայացման ժամկետներ	· Վարկի տրամադրման կամ մերժման որոշումը կայացվում է առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում, որոշումների կայացման համար Բանկի կողմից պահանջվող նախնական փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացնելուց հետո: · Վարկը տրամադրվում է Բանկի կողմից դրական որոշման դեպքում, գրավի առարկա հանդիսացող գույքի գրավադրման գործընթացը ավարտելուց հետո առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:		
Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	· Ավտոմեքենայի ձեռքբերման և գրավադրման հետ կապված պետական իրավասու մարմնում գրանցման վճարներ · Այլ վճարներ համաձայն Բանկում գործող սակագներ և դրույթների: Առաջնային շուկայից առցանց վարկավորման համակարգի միջոցով տրամադրվող վարկերի դեպքում շարժական գույքի գրավի հաստատման (ձևակերպման) միջնորդավճար չի կիրառվում:		

Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ 13.82%-23.12%



Թարմացվել է 03.26.25-ին

Evocabank-ը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից:

www.evoca.am +374 10 60 55 55

